ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 հոկտեմբերի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

146
(3177)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔՐԳՈՐԾՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ Մանկավարժական համալսարանի արդեն նախկին ռեկտոր Սրբուհի Գեւորգյանի ձերբակալությունից մոտ երկու օր առաջ Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչները նաեւ ԿԳՄՍ նախարարություն են այցելել: Նախարարությանը մոտ գտնվող մեր աղբյուրները փոխանցում են, որ նախարար Ժաննա Անդրեասյանին տեղեկացվել է, որ իր կողմից ղեկավարվող հոգաբարձուների խորհուրդը համալսարանում լուրջ չարաշահումներ է հայտնաբերել, ու կա պայմանագիր, որտեղ առկա է Անդրեասյանի ստորագրությունը: Մեր աղբյուրները փոխանցում են, որ Անդրեասյանը խուճապի է մատնվել, կանչել է ԿԳՄՍ նախարարության աշխատակազմին, քարտուղարին՝ հասկանալու համար, թե ինչ պայմանագրի մասին է խոսքը: Երկար ժամանակ քննարկում է եղել, որից հետո Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչները հեռացել են նախարարի աշխատասենյակից: Իսկ արդեն երկու օր անց Անդրեասյանի ամենամտերիմ ընկերուհի Սրբուհի Գեւորգյանին Հակակոռուպցիոն կոմիտեն ձերբակալում է, ինչից հետո գրավի դիմաց նրա նկատմամբ տնային կալանք խափանման միջոցն է կիրառվում:

Ուշագրավ է, որ նախարար Ժաննա Անդրեասյանը, լինելով Մանկավարժական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահը, մինչեւ հիմա ոչ մի կարգավիճակ չունի այս գործի շրջանակում: Նա անգամ վկա չէ: Մինչդեռ որպես ԵՊԲՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Արմեն Աշոտյանը մոտ 3 տարի կալանքի տակ մնաց:

Ավելին՝ Ժաննա Անդրեասյանն ԱԺ ամբիոնից փորձում էր նախօրեին «մաքրել» իրեն այս գործից, այն պարագայում, երբ նրա կողմից երաշխավորված Սրբուհի Գեւորգյանն ամեն հարցում իր հետ է ճշտումներ արել, ու դա գիտեն իրավապահները:

Հիշեցնենք, որ ուրբաթ օրը՝ հոկտեմբերի 17-ին,Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվող քրեական վարույթի շրջանակներում ձերբակալվել էին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորը եւ պրոռեկտորը: Վերջիններս մեղադրվում են համալսարանի տարբեր աշխատակիցներից կազմված հանցավոր կազմակերպություն ստեղծելու եւ ղեկավարելու, առանձնապես խոշոր չափերով վատնում եւ խարդախություն կատարելու, ինչպես նաեւ կաշառք ստանալու համար: Քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել են նաեւ համալսարանի մի շարք այլ աշխատակիցներ:

Իսկ ԿՁՆԱԿ (Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն) հիմնադրամի կրթական նորությունների եւ հետազոտության վարչության պետ, սկանդալով հայտնի Լիլիթ Մկրտչյանը նշանակվել է Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժ/պ:



Երեկ կառավարության նիստում Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց ներդրումային ծրագիր, որի նպատակն է կարգի բերել Կասկադ համալիրի ամբողջական տեսքն ու կյանքի կոչել թամանյանական ու ջիմթորոսյանական կոնցեպտը: Քաղաքապետը, մասնավորապես, նշեց, որ կառուցապատման ավարտից հետո կունենանք համայնքի ենթակայության տակ գտնվող 1000 տեղանոց համերգասրահ, ժամանակակից արվեստի թանգարան, նոր ցուցասրահներով հագեցած պետական արարողակարգային միջոցառումների համար նախատեսված առանձնացված հատված: Կձեւավորվի մշակութային նոր հանգույց՝ շուրջ 30 հզ քառ. մետր տարածքով, իսկ կառուցապատող ընկերությունը շրջակա մոտ 4.5 հա տարածքի վրա կիրականացնի կառուցապատում, որը ներդաշնակ կլինի տարածքի ու համալիրի ճարտարապետությանը: Տիգրան Ավինյանը նշեց նաեւ, որ Կասկադի այդ հատվածը 2007 թվականից փորված է, ու գործը տեղից չի շարժվել. այն տարիներին հայտարարվել է մրցույթ, որին հաղթել է նյույորքյան ընկերություն, սակայն շինարարությունը ավարտին չի հասել: Վերջին տարիներին հայտարարված մրցույթներին մասնակցել են բազմաթիվ հայ ճարտարապետներ իրենց նախագծերով, սակայն երկար քննարկումներից հետո որոշում է կայացվել՝ «Ակտիվ քաղաքացի» հարթակում քվեարկությամբ որոշել հաղթողին: Քվեարկության են դրվել երկու նախագծեր՝ մեկը վերոնշյալ նյույորքյան ընկերության, իսկ մյուսը ֆրանսիական ընկերության կողմից առաջարկված նախագծերը: Քվեարկության արդյունքներով հաղթող է ճանաչվել երկրորդը՝ ֆրանսիականը, որն էլ քաղաքապետարանի կողմից վերցվել է որպես էսքիզային տարբերակ, ու հայտարարվել է մրցույթ, որի պահանջներից է եղել արդեն իսկ նշված համերգասրահի, թանգարանի ու մյուս կառույցների պարտադիր ներառումը ու դրանց սեփականության իրավունքով քաղաքային իշխանություններին հանձնելը, ինչի դիմաց հատկացվել է 4.5 հեկտարի չափով հարակից տարածք կառուցապատման համար: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանը պաշտոնի նշանակվել է 2023 թվականի փետրվարի 3-ին, Ալեն Սիմոնյանի որոշմամբ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքում տեղադրված, 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրից տեղեկանում ենք, որ Դավիթ Առաքելյանը սեփական անշարժ գույք չունի եւ բնակվում է այլ անձին սեփականությամբ պատկանող բնակարանում, որը 90 օրից ավելի շահագործվում է իր կողմից: Առաքելյանը 2021 թվականին նվիրատվություն էր ստացել 2016 թվականի արտադրության, Toyota մակնիշի մեքենա, որը նախորդ տարի վաճառել է 6,6 մլն դրամով: ԱԺ աշխատակազմի ղեկավարի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 1 մլն 377 հազար դրամ: Առաքելյանը ունի նաեւ կրիպտոարժույթներ՝6,474 FTN: ***Մանրամասները եւ շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

«Ժողովուրդ» օրաթերթը ստացել է տեղեկություն, ըստ որի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանի վերաբերյալ ընթացքի մեջ է որոշակի վարույթ: Հարցմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից պահանջել էինք տրամադրել հետեւյալ տեղեկությունները. արդյոք Անահիտ Մանասյանի վերաբերյալ ձեր հանձնաժողովում իսկապես հարուցվե՞լ է վարույթ: Եթե այո, ապա ի՞նչ հիմքով եւ ո՞ւմ դիմումի կամ հաղորդման հիման վրա է այն հարուցվել: Ի՞նչ հարցի շուրջ է վարույթը եւ ի՞նչ փուլում է ներկայումս գտնվում: Ե՞րբ է նախատեսվում վարույթի ավարտը կամ եզրակացության ընդունումը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Մարիամ Գալստյանից «Ժողովուրդ» օրաթերթը ստացավ հետեւյալ պատասխանը: «Հանձնաժողովը, քաղաքացու դիմումի հիման վրա, 2025 թ. սեպտեմբերի 30-ի որոշմամբ մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ վարքագծի կանոնների առերեւույթ խախտման հիմքով հարուցել է վարույթ, որը գտնվում է ընթացքի փուլում: Միաժամանակ, հաշվի առնելով, որ վարույթը ներառում է մասնավոր անձանց անձնական կյանքին վերաբերող գաղտնի եւ զգայուն տվյալներ, հիմք ընդունելով մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը եւ առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովի կողմից վարույթի հանգամանքների եւ դիմողի ինքնության վերաբերյալ այլ մանրամասներ վարույթի իրականացման ընթացիկ փուլում չեն կարող տրամադրվել»,- ասված է «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան: ***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԻԾԸ ԴԵՌ ԹՂԹԻ ՎՐԱ Է

ԻՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ԲԱՑԵՐ ՈՒՆԻ ԾՐԱԳԻՐԸ

2026 թվականից Հայաստանում նախատեսվում է սկսել առողջապահության պարտադիր ապահովագրության գործընթացը: Այս մասին հոկտեմբերի 21-ին կայացած ասուլիսում հայտնել է ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը՝ նշելով, որ ծրագրի համար պետական բյուջեում արդեն հատկացված ծախսեր կան: Նախարարի խոսքով՝ համակարգը կներդրվի երեք փուլով՝ կմեկնարկի 2026-ին եւ կավարտվի 2028 թվականին:

Թեեւ նախարար Ավանեսյանը վստահ եւ հստակ խոսում է ծրագրի գործարկման մասին, սակայն այն այդպես էլ մնում է միայն թղթի վրա: Նախագիծը դեռ չի քննարկվել ո՛չ Ազգային ժողովում, ո՛չ էլ ԱԺ համապատասխան հանձնաժողովներում, եւ որեւէ կառույց պաշտոնական կարծիք չի հայտնել դրա վերաբերյալ:

Նմանատիպ փորձ արվել էր նաեւ նախկինում: 2024 թվականին նախարար Ավանեսյանը հայտարարել էր, որ նույն տարվա հուլիսից պետք է գործարկվեր ապահովագրական փաթեթ՝ պետական պատվերի շահառուների համար: Սակայն ծրագիրը այդպես էլ չիրականացավ: Երկու տարի առաջ նախաձեռնված փաստաթուղթը մնաց առանց ընթացքի, իսկ 2024-ի հոկտեմբերին ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը փաստացի հերքեց Ավանեսյանի՝ հունվարին տված խոստումը:

Առողջապահական ապահովագրության եւ պետպատվերի համակարգերի խնդիրների մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրուցել է «Առողջություն եւ առողջապահություն» հասարակական կազմակերպության նախագահ, բժշկական գիտությունների թեկնածու Լիլիթ Կուջոյանի հետ:

-Տիկին Կուջոյան, առողջապահությունն այն ոլորտներից է, որտեղ մշտապես կան համակարգային խնդիրներ եւ բարեփոխումների անհրաժեշտություն: Մեկ տարի առաջ նախարարությունը ներկայացրեց պարտադիր ապահովագրության ծրագիրը՝ ասելով, որ սա լավագույն տարբերակն է, բոլոր քաղաքացիների համար, աշխատողների համար առանձին պայմաններ էին առաջարկում: Դա ձախողելուց հետո՝ բերեցին նույն նախագծի թարմացված տարբերակը: Ի՞նչ կասեք, թիրախային կետեր կա՞ն այս նախագծում:

-Խնդիրը չափազանց մեծ է, եւ այն ամբողջությամբ լուսաբանելու համար օրեր կպահանջվեն: 2018-ից հետո, հատկապես 2021-ի նախընտրական շրջանում, իշխանությունը խոստանում էր ապահովագրել բոլորին՝նշելով, որ «բոլորի համար լավ է լինելու»: Սակայն ընտրություններից հետո թեման կամաց-կամաց մարեց՝մնալով «ընթացքի մեջ» ձեւակերպման տակ: Անցյալ տարի ներկայացվեց նոր նախագիծ, որը մենք՝որպես մասնագետներ, բավականին քննադատեցինք:

Ենթադրենք՝նախագիծն ընդունվել է, եւ պարտադիր ապահովագրությունը գործում է: Պետք է արձանագրեմ, որ մենք հիմա քննարկում ենք միայն այն, ինչ ներկայացված է e-draft հարթակում եւ ինչի մասին նախարարն է հրապարակային խոսում: Օրենքի նախագծի վերնագրում նշվում է «Առողջապահության համապարփակ ապահովագրություն», սակայն այս ձեւակերպումն իրականությանը չի համապատասխանում: «Համապարփակ» բառը ենթադրում է ընդգրկունություն, մինչդեռ նախագիծը նախատեսում է ծածկել առողջապահական ծախսերի ընդամենը շուրջ 30 տոկոսը:

Նախագծով նշվում է, որ մինչեւ 18 տարեկան երեխաները պետք է ընդգրկվեն ծրագրում: Սակայն այս տարիքային խումբը արդեն իսկ անվճար սպասարկվում է պետպատվերի շրջանակում: Այլ խնդիր է, որ տարիներ շարունակ պետական պատվերի ֆինանսավորումը պարբերաբար դադարեցվում է տարվա կեսից կամ վերջին եռամսյակում: Ուստի «համապարփակ ապահովագրություն» անվանումը որեւէ նորություն չի բերում եւ խնդրի էությունը չի փոխում, եթե կառավարիչները եւ կառավարման գործելաոճը նույնն են մնում:

Նույնը վերաբերում է նաեւ 65 եւ բարձր տարիք ունեցողներին: Նրանք այս պահին էլ հիմնականում սպասարկվում են առաջնային օղակներում՝ պոլիկլինիկաներում: Բայց հենց այդ օղակներում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք մարդկանց հաճախ հետ են պահում բժշկի դիմելուց: Փոխանակ ծրագրով ամրապնդվի այդ համակարգը եւ խրախուսվի պոլիկլինիկաների հաճախելիությունը, նախագծով այս խումբը պարզապես ներառվում է ապահովագրության ընդհանուր փաթեթում՝ առանց արմատական բարեփոխումների:

Նախագծում նշվում է, որ քաղաքացիների տարեկան վճարը տատանվելու է 140.000-ից մինչեւ 160.000 դրամի սահմաններում: Սակայն որեւէ տեղ նշված չէ, թե ինչ հաշվարկների հիման վրա են սահմանվել այդ թվերը: Օրինակ՝ ինչպես կարող է 200.000 դրամ եւ ավելի եկամուտ ունեցող քաղաքացին վճարել այդքան գումար՝առանց հստակ մեխանիզմների եւ հստակեցված հաշվարկների:

Այսպիսով, թեեւ առողջապահության նախարարությունը խոսում է համակարգային փոփոխությունների անհրաժեշտության մասին, մասնագետների գնահատմամբ՝ պարտադիր ապահովագրության ներկայիս տարբերակը դեռեւս հիմնավոր ծրագիր չէ եւ չի տալիս այնպիսի հստակ երաշխիքներ, որոնք կարող են ապահովել ոլորտի երկարաժամկետ կայուն զարգացումը:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ
Հարցազրույցն ամբողջությամբ՝
ArmLur.am կայքում:

ՈՎ Է ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐԸ

Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի որոշմամբ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար է նշանակվել Տիգրան Գաբրիելյանը: Գաբրիելյանն այս մասին գրել է «Ֆեյսբուք»-ի իր էջում:

Նորանշանակ ղեկավարը շնորհակալություն է հայտնել վստահության համար՝ ընդգծելով, որ իր համար մեծ պատիվ եւ պատասխանատվություն է աշխատել Շենգավիթի զարգացման եւ համայնքի բարեկեցության բարձրացման ուղղությամբ:

«Շենգավիթ վարչական շրջանում մինչ օրս իրականացվել են հսկայածավալ աշխատանքներ: Կատարվածը պահպանելու եւ զարգացնելու համար պարտավոր ենք միասնական աշխատանքով շարունակել զորացնել Շենգավիթը:

Սիրելի՛ ժողովուրդ, ձեզ հետ միասին մենք կխթանենք զարգացման նոր վեկտորներ: Տնտեսական հնարավորությունները, սոցիալական ենթակառուցվածքները, ծառայությունների մատուցման որակը, այս բոլորը միավորելով՝ նպատակ ունենք, որ Շենգավիթը երեւանցիների համար լինի սիրով ապրելու վայր, որտեղ իր պատմությունն ու գեղեցկությունը պահպանելու եւ նորով լրացնելու բազում հնարավորություններ կլինեն»,- նշել է Գաբրիելյանը:

Նա ընդգծել է, որ իր գործունեության առանցքում լինելու է բնակչության մասնակցությունը համայնքային որոշումների կայացման գործընթացին:

«Յուրաքանչյուր բնակիչ պետք է զգա, որ իր ձայնը կարեւոր է, որ նրա գաղափարները գնահատվում են: Շենգավիթի աշխատակազմի հետ համատեղ կառուցողական մոտեցմամբ կիրականացնենք մարդակենտրոն աշխատանքներ, որտեղ յուրաքանչյուրիս նվիրվածությունը գրավականն է լավագույն արդյունքների»,- եզրափակել է Գաբրիելյանը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ»-ում գործարկվել է նոր «Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգ»:

Նոր համակարգը հնարավորություն է տալիս գործատուներին ստեղծել եւ էլեկտրոնային եղանակով ստորագրել աշխատանքային պայմանագրեր, աշխատանքի ընդունման ու պայմանագրի լուծման հրամաններ եւ համաձայնագրեր: Համակարգում բոլոր փաստաթղթերը կարող են ձեւավորվել երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն:

Միաժամանակ, աշխատողները համակարգ կարող են մուտք գործել «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»-ի միջոցով՝ իրենց հետ կնքված փաստաթղթերը դիտելու եւ ստորագրելու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՀԱՅ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը, խմբակցության պատգամավորներ Արթուր Խաչատրյանը, Աննա Գրիգորյանը եւ Արմեն Գեւորգյանը հոկտեմբերի 23-ին հանդիպել են Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, արտակարգ եւ լիազոր դեսպան Վասիլիս Մարագոսին՝ վերջինիս խնդրանքով: Այս մասին հայտնում են ՀՀ Ազգային ժողովից:

Հանդիպման ընթացքում «Հայաստան» խմբակցությունը ներկայացրել է իր տեսակետը մի շարք հարցերի շուրջ: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել հանրապետությունում ստեղծված ներքաղաքական իրավիճակին, մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության, խոսքի ազատության հետ կապված խնդիրներին: Մտքեր են փոխանակվել Ադրբեջանում պահվող անձանց հարցի, իշխանություն-ընդդիմություն հարաբերությունների վերաբերյալ:

ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը հաստատել է ԿՁՆԱԿ (Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն) հիմնադրամի կրթական նորությունների եւ հետազոտության վարչության պետ Լիլիթ Մկրտչյանին բուհի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու որոշումը:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը հայտնել էր՝ ԿՁՆԱԿ (Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն) հիմնադրամի կրթական նորությունների եւ հետազոտության վարչության պետ Լիլիթ Մկրտչյանը նշանակվել է Մանկավարժ համալսարանի ռեկտորի ժ/պ:

Որոշումն ուժի մեջ է մտնելու հոկտեմբերի 29-ից:

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը հոկտեմբերի 22-ին հայտնել էր, որ Մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանի լիազորությունները կասեցվել են՝ հաշվի առնելով Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հարուցված քրեական վարույթի շրջանակներում նրան առաջադրված մեղադրանքները:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՎՍ ԵՐԿՈՒ ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է ՀԱՄԱՅՆՔԻՆ

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի մարտի 11-ին հայցադիմումներ էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ ֆիզիկական երկու անձի, երրորդ անձ՝ Տավուշի մարզի Իջեւան համայնքի՝ ք. Իջեւան, Վալանսի փողոցի 1/29 հասցեում գտնվող՝ 0.06 հա մակերեսով հողամասի եւ ք. Իջեւան, Անկախության փողոց 1/62 հասցեում գտնվող՝ 0.001 հա մակերեսով հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը դադարեցնելու պահանջով:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի օգոստոսի 29-ի վճիռներով Գլխավոր դատախազության հայցերը բավարարվել են. դադարեցվել է վերոնշյալ հողամասերի նկատմամբ ֆիզիկական անձանց կառուցապատման իրավունքը, վճիռները ստացել են օրինական ուժ:

Գլխավոր դատախազության դիմումների հիման վրա՝ Կադաստրի կոմիտեն 2025 թվականի հոկտեմբերի 14-ին եւ հոկտեմբերի 22-ին դադարեցրել է նշված հողամասերի նկատմամբ ֆիզիկական անձանց կառուցապատման իրավունքը: Իջեւանի քաղաքային զբոսայգու տարածքում գտնվող նշված երկու հողամասերը վերադարձվել են համայնքին:

Հիշեցնենք, որ Գլխավոր դատախազության Պետական շահերի պաշտպանության վարչությունը 16 հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ Տավուշի մարզի Իջեւան համայնքի քաղաքային զբոսայգու տարածքում գտնվող հողամասերի նկատմամբ կառուցապատման իրավունքները հարկադիր դադարեցնելու եւ հողատարածքները Իջեւան համայնքին վերադարձնելու հայցապահանջներով:

Այսպիսով՝ վերոնշյալ 16 հայցադիմումներից 8-ի բավարարման եւ օրինական ուժի մեջ մտնելու արդյունքում, ներկայում Իջեւան համայնքին են վերադարձվել՝

- Վալանսի փողոցի 1/29 հասցեում գտնվող՝ 0.06 հա մակերեսով հողամասը,
- Անկախության փողոց 1/62 հասցեում գտնվող՝ 0.001 հա մակերեսով հողամասը,
- Անկախության 1/54 հասցեում գտնվող՝ 436.8 քմ մակերեսով հողամասը,
- Անկախության 1/41 հասցեում գտնվող՝ 1500 քմ մակերեսով հողամասը,
- Անկախության փողոցի 18/6 հասցեում գտնվող՝ 0.03 հա մակերեսով հողամասը,
- Վալանսի փողոցի 1/27 հասցեում գտնվող՝ 0.03 հա մակերեսով հողամասը:
- Վալանսի փողոց թիվ 1/29 հասցեում գտնվող՝ 0.0605 հա մակերեսով հողամասը,
- Անկախության փողոց 1/62 հասցեում գտնվող՝ 0.00198 հա մակերեսով հողամասը:

Բացի դրանից, դատախազական ներգործության արդյունքում, Իջեւան համայնքի տիրապետմանն ու օգտագործմանն է վերադարձվել քաղաքային զբոսայգու շատրվաններին հարակից 0.03 հա մակերեսով հողամասը:

ԻՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ԱՀԱՐՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ

ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱԽԿԻՆ ՔՆՆԻՉ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Շուրջ մեկ տասնյակից ավելի տարիներ զբաղեցրելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության պետի տեղակալի պաշտոնը՝ Ահարոն Ներսիսյանը 2023 թվականի փետրվարից նշանակվել է Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի խորհրդականը:

Ահարոն Ներսիսյանը՝ որպես քննիչ, նաեւ պարգեւ է ստացել Նիկոլ Փաշինյանի կողմից:

Մամուլում տարածված տեղեկությունների համաձայն՝ Ներսիսյանը Քննչական կոմիտեում եղել է տարբեր շտաբների ու աշխատանքային խմբերի ղեկավար կազմում: Թե ինչու է քննիչի աշխատանքը փոխարինել ԱԺ նախագահի խորհրդականի պաշտոնով, հարցական է:

Իսկ ի՞նչ ունեցվածք ունի Ալեն Սիմոնյանի խորհրդականը.

Համաձայն 2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի՝ Ահարոն Ներսիսյանն ունի 5 հասարակական նշանակության շինության անշարժ գույք, որոնք գտնվում են Երեւան քաղաքում եւ ձեռք են բերվել 2015, 2018, 2017, 2019 թվականներին:

Ահարոն Ներսիսյանը 2021 թվականին ձեռք է բերել 2014 թվականի արտադրության TOYOTA մակնիշի մեքենա:

Նրա բանկային ավանդները կազմել են 11,8 մլն դրամ եւ 22,9 հազար դոլար: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 960 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները կազմել են 700 հազար դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 26 մլն 259 հազար դրամ, որից 11 միլիոն 759 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմից, 2 մլն 958 հազար դրամը եկամտահարկի վերադարձ է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից:

Եկամուտների մեծ մասը՝ գրեթե 5 մլն 763 հազար դրամը, Ներսիսյանը անշարժ գույքի վարձակալության դիմաց է ստացել:

Ահարոն ներսիսյանը Միասնական սոցիալական ծառայությունից ստանում է 3 մլն 495 հազար դրամ կենսաթոշակ:

«ԱյԴԻ» բանկ ՓԲԸ-ից եւ «Արդշինբանկ» ՓԲԸ-ից խորհրդականը ստացել է այլ եկամուտներ՝ 2 մլն 284 հազար դրամ:

Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 8 մլն 513 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅՏՆԻ ԵՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԵՐԸ

ԿԳՄՍ նախարարի՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ի N 2488-Ա/2 հրամանով լրացումներ եւ փոփոխություններ են կատարվել ԿԳՄՍ նախարարի 2025 թվականի օգոստոսի 29-ի «2025 թվականի ուսուցիչների, արտադպրոցական ծրագրեր իրականացնող կենտրոնների, այդ թվում՝ մանկապատանեկան ստեղծագործական, մշակութային եւ գեղագիտական կենտրոնների, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների մանկավարժական աշխատողների եւ մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների, հոգեբանի ծառայություն տրամադրող մասնագետների՝ «Հոգեբանություն» ուղղությամբ, կամավոր ատեստավորման ժամանակացույցը հաստատելու մասին» N 2035-Ա/2 հրամանում:

Լրացումները եւ փոփոխությունները վերաբերում են հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների կամավոր ատեստավորմանը. ըստ այդմ՝ ամրագրվել են օրերը, ժամերը եւ քննական կենտրոնները:

Հրամանով հաստատված քննական կենտրոնները վերաբերում են նաեւ մանկապատանեկան ստեղծագործական, մշակութային եւ գեղագիտական կենտրոնների, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների մանկավարժական աշխատողների եւ մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների, հոգեբանի ծառայություն տրամադրող մասնագետների ատեստավորմանը: Նշյալ խմբի ատեստավորման ժամի մասին կտրամադրվի հավելյալ տեղեկատվություն:

Քննությունների անցկացման վայրի եւ ժամի մասին տեղեկություն ատեստավորման մասնակիցները կստանան նաեւ matyan.emis.am կամ at.emis.am կայքերի միջոցով՝ կախված նրանից, թե որ հարթակով են գրանցվել:

ՍՏԵՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆԸ (ՏԵՐ ԱՐԱՄ) ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է

Կարգալույծ հռչակված, նախկին քահանա Ստեփան Ասատրյանը գրում է. «Գերաշնորհ Սրբազան Հայր, ստացել եմ Ձեր թիվ 1051 նամակը, որով նախ տեղեկացնում եք Հայրապետական տնօրինության մասին, ապա նաեւ դրանից բխող տարատեսակ պահանջներ եք ներկայացնում:

Ցավոք, Հայրապետական տնօրինության մասին նախ տեղեկացել եմ ֆեյսբուք սոցիալական կայքից, ապա մեկ օր անց նոր պաշտոնական Մայր Աթոռից՝ Ձեր միջոցով: Ի դեպ, խորհրդակատարություններից հետո եմ համացանցում հանդիպել այդ որոշման մասին, եւ այստեղ հարց է առաջանում՝ «Ֆեյսբուքից» հոգեւոր հովիվ ինֆորմացիայի փոխանցման ճանապարհին ի՞նչ է կատարվել Սուրբ Հովհաննավանքում: Գերաշնորհ Սրբազան Հայր, Դուք եւս անդամ եք Շնորհների բաշխման եւ կարգապահական հարցերի հանձնախմբի, ուստի ակնկալում եմ տրամադրել ինձ.

1. Ի՞նչ ընթացակարգով եւ կանոնակարգով են տեղի ունեցել Հանձնախմբի նիստերը, եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ո՞ր կանոնն է շրջանցվել իմ կողմից:

2. Կարգապահական հանձնախմբի անդամ եպիսկոպոսն իմ կարգապահական հարցերի քննարկման օրերին Հայ Եկեղեցու ո՞ր կանոնն է ցիտում՝ հանրային խոսույթում Եկեղեցու քահանային «Հուդա» անվանելիս: Եվ ի՞նչ վերաբերմունք ունեք «Հուդայի» կողմից իրականացվող Սուրբ Խորհուրդների վերաբերյալ:

3. Կարգապահական հանձնախմբի պաշտոնական նամակում «քննարկման» հրավիրելիս ի՞նչ հիմքով են կանխակալ մոտեցմամբ «ապատեղեկատվություն» անվանվում իմ մտահոգությունները:

4. Ինչպե՞ս է Հայրապետական տնօրինությամբ նշվում իմ կողմից երիցս չներկայանալու «փաստն» այն դեպքում, երբ ես գրություններով երիցս պատրաստակամություն եմ հայտնել հանդիպելու Հանձնախմբին՝նպատակը ճշտելու պայմաններում:

Այս եւ նմանատիպ հարցերի պատասխանները լուսաբանելու համար՝ խնդրում եմ տրամադրել ինձ Տնօրինության հիմք հանդիսացող Կարգապահական հանձնախմբի նիստերի արձանագրություններն ու որոշումների հիմքերը: Վերոհիշյալ նյութերի տրամադրումից հետո կարձագանքեմ իմ հետագա քահանայագործության վերաբերյալ:

Կանխահայտ շնորհակալությամբ՝

Արամ քահանա Ասատրյան, Հովհաննավանքի հոգեւոր հովիվ:

23 հոկտեմբերի 2025 թվական:

Հ.Գ. Ի պատասխան Հայրապետական ֆեյսբուքյան տնօրինության՝ պատասխանում եմ նույն հարթակում», գրել էր Ստեփան Ասատրյանը:

ԳՅՈՒՄՐՈՒ ՄԻՋԱԴԵՊԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ հոկտեմբերի 20-ին Գյումրիում տեղի ունեցած միջադեպով համատարած կալանավորումներ են: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ զանգվածային անկարգություններ կատարելու համար կալանավորվել են Հենրիկ Գեւորգյանը, տնային կալանքի տակ է անչափահաս երեխա, որի անունը հարգելի պատճառներով չենք հրապարակում:

2 ամսով կալանավորվել է Գ. Ղ.-ն, Ն. Ղ.-ն կալանավորվել է 40 օրով, Ռ. Ս.-Ն եւս կալանավորվել է 40 օրով, Կ. Հ.-ն եւ եւս Կ. Հ.-ն կալանավորվել են 2 ամսով, Հ. Մ.-ի նկատմամբ կալանք է ընտրվել 2 ամիսը, Ա. Պ.-ի նկատմամաբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը, 1 մլն գրավ եւ բացակայելու արգելք:

Փաստացի այս պահին կալանավորված է 9 անձ. մեր հրապարակումներով առաջիկայում կանդրադառնանք, թե ինչ ճակատագրի են արժանանալու մյուս 10 անձինք, որոնց նկատմամբ նախաքննական մարմինը քրեական հետապնդում է սկսել:

Ինչպես հայտնել էր Քննչական կոմիտեն՝ Շիրակի մարզային քննչական վարչությունում իրականացվող զանգվածային անկարգություններին մասնակցելու, պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու եւ արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում ձերբակալվել է 37 անձ:

Ըստ Քննչականի՝ առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2025 թվականի հոկտեմբերի 20-ին Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակներում քննիչների կողմից իրականացված քննչական գործողություններին խոչընդոտելու նպատակով Գյումրու համայնքապետարանի վարչական շենքի մոտ՝ այդ թվում նաեւ մուտքերի մոտ ու վարչական շենքում, հավաքվել են մի խումբ անձինք, ովքեր տարաբնույթ գործողությունների իրականացմամբ միջամտել են գործի քննությանն ու հասարակական անվտանգությանն սպառնացող զանգվածային անկարգություններ են կատարել:

Մասնավորապես, վերջիններս կոչեր են հնչեցրել արգելափակել համայնքապետարանի վարչական շենքի մուտքերը, որպեսզի հնարավոր չլինի տեղափոխել ձերբակալված ու համայնքապետարանի վարչական շենքում գտնվող անձանց, վնասել են ոստիկանության ծառայողական փոխադրամիջոցի անվադողերը, համայնքապետարանի վարչական շենքի գույքը, այդ ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու նպատակով բռնություն են գործադրել վերջիններիս նկատմամբ, նրանց ուղղությամբ նետել են կրակայրիչներ եւ շշեր, վերջիններիս հասցեին հնչեցրել վիրավորական արտահայտություններ:

19 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով (զանգվածային անկարգություններին մասնակցելը) եւ 486-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը), 10 անձի նկատմամբ՝ 486-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը) եւ 46-327-րդ հոդվածի 1-ին մասով (զանգվածային անկարգություններին մասնակցելուն դրդելը):

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՄԱՐԻԽՈՒԱՆԱՅՈՎ ՓԱԹԵԹՆԵՐ ՈՒ ԱՏՐՃԱՆԱԿ

Հոկտեմբերի 18-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, մայրաքաղաքի Տիգրան Մեծի պողոտայում Երեւանի պարեկները նկատել են «ԲՄՎ» մակնիշի մի ավտոմեքենա, որի վարորդը, ըստ օպերատիվ տեղեկության, զբաղվում էր տեղադրելու միջոցով թմրանյութի իրացմամբ: Սահմանված կարգով պարեկները կանգնեցրել են ավտոմեքենան, սակայն վարորդը չի ենթարկվել ու դիմել է փախուստի:

Արցախի պողոտայում «ԲՄՎ»-ն ինքնավթարի է ենթարկվել: Վարորդը դուրս է եկել մեքենայից, իր մոտ եղած պայուսակը նետել մոտակա այգին ու փորձել փախչել, սակայն դա էլ չի հաջողվել:

Վարորդը ձերբակալվել ու տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Էրեբունու բաժին: Պարզվել է, որ նա Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղի բնակիչ է, 26 տարեկան:

Կազմված փաստաթղթերը փոխանցվել են Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նույն օրը, քրեական վարույթի շրջանակում, կատարվել է դեպքի վայրի զննություն: Երիտասարդի նետած պայուսակում հայտնաբերվել է դեղնականաչավուն զանգվածով 35 փաթեթ՝ ընդհանուր մոտ 57 գրամ քաշով: Պայուսակում կար նաեւ երեք փամփուշտով լիցքավորված ատրճանակ ու եւս յոթ փամփուշտ՝ պահունակի գրպանում:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԿՐԱԿՈՑ

Հոկտեմբերի 22-ին՝ ժամը 19:10-ի սահմաններում, հետազոտման նպատակով քաղաքացիական հիվանդանոց տեղափոխված «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձը, ցած թռչելով հիվանդանոցի պատուհանից, դիմել է փախուստի: Այս մասին հայտնում է Քրեակատարողական ծառայությունը:

Քրեակատարողական ծառայողը, սպառելով կալանավորված անձի փախուստը կանխելու բոլոր մյուս միջոցները, մեկ նախազգուշական կրակոց է օդ արձակել, սակայն կալանավորված անձը չի ենթարկվել, եւ անցնելով հիվանդանոցի դարպասից դեպի դուրս՝ շարունակել է փախուստը: Ծառայողը կրակել է կալանավորված անձի ոտքի շրջանում եւ այդպիսով կանխել վերջինիս փախուստը:

Կալանավորված անձին ցուցաբերվել է բուժօգնություն, ըստ բժշկական գնահատման՝ նրա կյանքին վտանգ չի սպառնում:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ

Երեկ՝ հոկտեմբերի 23-ին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ երկու ամսով կալանավորվեց «Մեր ձեւով» ժողովրդական շարժման անդամ, ծանրամարտի լեգենդար մարզիչ երջանկահիշատակ Աշոտ Մխիթարյանի որդի՝ փաստաբան Ռուբեն Մխիթարյանը: Այս մասին հայտնում է «Մեր ձեւով» շարժումը:

Հիշեցնենք, որ օրեր առաջ Գյումրիում բերման էր ենթարկվել Ռուբեն Մխիթարյանը:

«Բերման է ենթարկվել «Մեր ձեւով» շարժման անդամ Ռուբեն Մխիթարյանը, որը, որպես իրավապաշտպան, փորձում էր հանդարտեցնել Գյումրու քաղաքապետարանում ստեղծված անթույլատրելի իրավիճակը», - հայտնել էին «Մեր ձեւով» շարժումից:

ԱՐՏԱԿԱՐԳ

ԽՈՇՈՐ ՀՐԴԵՀ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ



Երեկ՝ հոկտեմբերի 23-ին, խոշոր հրդեհ է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 13:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ ժողովրդին հայտնի Մալաթիայի տոնավաճառի հարեւանությամբ գտնվող կոշիկի պահեստային մասում, հրդեհ է բռնկվել:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն ժամանել են Երեւանի հրշեջ-փրկարարական ջոկատներից 4 մարտական հաշվարկ:

Հրշեջների աշխատանքը տեղում ղեկավարում է Երեւանի հրշեջ-փրկարարական վարչության պետի պաշտոնակատար Ջավեն Մելքոնյանը:

Ժամանել են նաեւ Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի եւ օպերատիվ կառավարման կենտրոնի աշխատակիցները:

Ժամը 14:45-ի դրությամբ (հոկտ. 23) հրշեջները պայքարում էին կրակի տարածման դեմ, իսկ կրակն ու ծուխը տեսանելի էին մի քանի 100 մետրից:

Դեպքի վայր ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի պարեկները գումարտակի հրամանատար Արմեն Գասպարյանի գլխավորությամբ:

Դեպքի վայրում էր գտնվում նաեւ Երեւանի 1-03 շտապօգնության բժիշկների 2 հերթապահ խումբ:

Ահազանգով ժամանել են նաեւ «Գազպրոմ Արմենիա», «Տրանսգազ» եւ Երեւանի ԳԳՄ-ի աշխատակիցները:

Տեղում պարզվել է, որ տարածքը, որտեղ հրդեհ է բռնկվել, գազիֆիկացված չէ:

Ժամանել են նաեւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության ներկայացուցիչներն ու Մալաթիայի համայնքային ոստիկանները:

Ըստ նախնական տեղեկությունների՝ բարեբախտաբար տուժածներ չկան:

Թե ինչն է եղել հրդեհի պատճառը եւ ով է տարածքի սեփականատերը՝ պարզվում է:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 22-ից 23-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 100 դեպք, որից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԴԻԼԻՋԱՆԸ ՄԱՔՈՒՐ ՉԵՆ ՊԱՀՈՒՄ

Տուրիստական Դիլիջան քաղաքի համար աղբահանության, քաղաքի փողոցների մաքրության խնդիրը ավանդաբար եղել է: Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը այս տարվա հուլիսի 31-ին որոշել է 2025 թվականի հուլիսի 31-ից Դիլիջանի համայնքային ենթակայության՝ «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրեն Վանուշ Փիլոյանին ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով 2022 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը: Դավիթ Սարգսյանը որոշել է 2025 թվականի օգոստոսի 1-ից համայնքային ենթակայության «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Հայկ Մնացականյանին, մինչեւ համայնքային ոչ առեւտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի կայացումը: Հ. Մնացականյանը մինչ այդ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ էր: Դիլիջանի կոմունալ սպասարկման հիմնարկի տնօրենի փոփոխությունից հետո որոշակի կերպով բարելավվել է Դիլիջան քաղաքի աղբահանությունը, սակայն այս ոլորտում դեռ բազում չլուծված խնդիրներ կան: Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցում շինարարական աղբը լցնում են Աղստեւ գետը, որ վարարման ժամանակ գետը այն քշի-տանի: Բնակիչների կողմից մեծ քանակությամբ շինարարական աղբ Գետափնյա փողոցից Աղստեւ գետ թափելու վերաբերյալ տեսանյութը տեղադրված է համացանցում: Աղստեւն էլ շուտ-շուտ չի վարարում, որպեսզի գետ թափված աղբը քշի-տանի, ու Աղստեւ լցված աղբը երկար ժամանակ գետի հունում մնում է: Դիլիջան քաղաքի բնակչուհի, հասարակական ակտիվիստ Լուսինե Գրիգորյանը «Ֆեյսբուքում» տեղադրել է իր նկարած տեսանյութը տուրիստական, գեղեցիկ Դիլիջան քաղաքի փողոցներում թափված մեծ քանակի աղբի մասին ու դրան կից գրառման մեջ նաեւ քաղաքի բնակիչներին է մեղադրել վատթար վիճակի համար. «Քաղաքը խեղդվում է աղբի մեջ, ոչ թե միայն արկղերով ու պլաստիկով, այլ անտարբերությամբ: Եվ այս դեմքով ենք մենք ներկայանում աշխարհին, քաղաքի այս բանուկ հատվածում, որտեղ օրական հազարավոր տուրիստներ գալիս են նկարվելու Միմինոյի արձանի մոտ ու վայելելու լճի գեղեցկությունը: Մենք բոլորս այս քաղաքի բնակիչներն ենք, բայց կարծես ոչ ոք իրեն պատասխանատու չի զգում նրա մաքրության համար: Եթե ամեն մեկը մի փոքր հոգա իր շրջապատի մասին, քաղաքը կդառնա ավելի մաքուր: Պատկան մարմիններից խոսելն էլ անիմաստ եմ համարում: Սա Դիլիջանն է, այստեղ մենք տանն ենք, իսկ մեր տունը վաղուց վերածվել է անկառավարելի աղբանոցի»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

«ՋԻ ԹԻ ԲԻ...» ՍՊԸ-Ն 10 ՄԼՐԴ ԴՐԱՄՈՎ ԳՆԵԼ Է ԿԱՍԿԱԴԻ ՀԱՐԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ

ՀՀ Կառավարությունը հոկտեմբերի 23-ի որոշմամբ որոշել է հավանություն տալ Երեւանի քաղաքապետարանի կողմից 15.01.2025թ. հայտարարված՝ «Կասկադ համալիրի վերակառուցման «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման իրավունքի շնորհման բաց մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Ջի Թի Բի դիվելոփմենթ», «Ռեալ Ջի», «Կարգո սըլուշն բրոֆեշեյջ», «Կարգո էքսպրես Ջորջիա» ՍՊ ընկերությունների անունից՝ 29.01.2025թ. համատեղ գործունեության մասին պայմանագրի հիման վրա, այսուհետեւ՝ Կոնսորցիումի անունից հանդես եկող իրավաբանական անձ՝ «Ջի Թի Բի դիվելոփմենթ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված (Երեւանի Թամանյան 10/1 հասցեի (01-006-0012-0122 կադաստրային ծածկագրով) 2.448102 հա մակերեսով հողամասում՝ այսուհետեւ Ա1 գոտի, «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման, Թամանյան 10/3 հասցեի (01-006-0012-0003, 01-006-0012-0116, 01-006-0012-0006 կադաստրային ծածկագրերով) 0.1953, 4.636157 եւ 0.04 հա մակերեսներով հողամասերում՝ այսուհետեւ Բ1 եւ Բ2 գոտի, եւ վերջինիս հարակից հյուսիսային հատվածից Բ2 գոտու համար նախատեսված հողամասով, արեւմտյան հատվածից դեպի Կասկադ համալիրի աստիճաններ ձգվող հողամասով, հարավային հատվածից ճանապարհով եւ արեւելյան կողմից հեւագայում որպես քաղաքային կանաչապատման ենթակա հողամասով պարփակված մոտ 1,8 հա մակերեսով տարածքում՝ այսուհետեւ Բ3 գոտի, բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման եւ դրան հարակից Անտառային 2/1 հասցեի՝ 1.825377 հա մակերեսով (01-006-0012-0115 կադաստրային ծածկագրով)) հողամասում կանաչապատում իրականացնելու ներդրումային ծրագրին (այսուհետեւ՝ ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի:

Կառավարությունը համաձայնություն կտա նաեւ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ընդգրկված, Երեւան համայնքի վարչական տարածքում գտնվող Թամանյան 10/1 հասցեի 2.448102 հա մակերեսով հողամասը, առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տրամադրելուն՝ «Կասկադ մշակութային հանգույց» ճարտարապետական նախագծի իրականացման նպատակով՝ համաձայն N 2 հավելվածի:

ArmLur.am-ը տեղեկանում է, որ Երեւան համայնքի վարչական տարածքում գտնվող Թամանյան 10/3 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 0.1953, 4.636157 եւ 0.04 հա մակերեսներով, 10,449,275,265 ՀՀ դրամ շուկայական արժեքին մոտարկված ընդհանուր կադաստրային արժեք ունեցող հողամասերը «Ջի Թի Բի դիվելոփմենթ» ՍՊ ընկերությանը ուղղակի վաճառքով, տարաժամկետ վճարման եղանակով օտարում են՝ բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նպատակով՝ համաձայն N 3 հավելվածի:

Հիշեցնենք, որ «Կասկադ» համալիրի վերակառուցման մրցույթում վերջերս հաղթեց «Ջի Թի Բի դիվելոփմենթ» ՍՊԸ-ն, որը 4 ընկերությունից բաղկացած կոնսորցիում է: Այն հիմնադրվել է 2024 թ. հոկտեմբերի 24-ին, եւ իրական շահառուն աղմկահարուց գործարարի համբավ ունեցող Գրիգոր Տեր-Ղազարյանն է 97.5 % մասնակցությամբ, 1,5 % մասնակցություն ունի ԱՄՆ քաղաքացի Բոբբի Սինգ Կանգը, եւ 1 % մասնակցություն՝ Հնդկաստանի քաղաքացի Սուլախան Սինղը:

Գրիգոր Տեր-Ղազարյանը «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանի եղբոր՝ Արմեն Սարգսյանի փեսան է: Իսկ «Հանրապետություն»-ը Երեւանի ավագանու ընտրություններից հետո իշխող ՔՊ-ի հետ համագործակցության հուշագիր ստորագրեց, Երեւանի փոխքաղաքապետի եւ երեք վարչական շրջանների ղեկավարների պաշտոնները վերցրեց՝ կիսելով քաղաքային կառավարման ոչ միայն պատասխանատվությունը. Երեւանի ամենախոշոր ծրագրերից մեկում «բարեկամաբար» հաղթել է Գրիգոր Տեր-Ղազարյանը: Ի՞նչ է սա. կոռուպցիոն մեխանիզմի գործադրմամբ իրականացված գործա՞ռք իշխանության «սրտի» գործարար Գրիգոր Տեր-Ղազարյանի հետ, ով նախկինում խարդախության համար դատապարտված է եղել:

ArmLur.am-ը, ուսումնասիրելով որոշմանը կից փաստաթղթերը, արձանագրում է, որ Երեւան համայնքին պատկանող հողատարածքում կառուցապատման իրավունքի շրջանակում կառուցվելու է ընդհանուր 20 միլիարդ 46 միլիոն ՀՀ դրամ ներդրումային արժեքով «Կասկադ մշակութային հանգույց» համալիրը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳ

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՊՆԴՈՒՄ Է՝ «ՇԵՆԻԿ» ՋՕԸ-Ն ԻՐԵՆ ԽԱԲԵԼ Է

Օրերս ArmLur.am-ն Արմավիր մարզի Շենիկ համայնքի բնակչից ահազանգ էր ստացել այն մասին, որ ջրամատակարարման իր հասցին «Շենիկ» ջրաօգտագործման ընկերությունը խոշոր չափով գումար է ներկայացրել:

Բնակիչը հայտնել էր, որ մինչ այդ նա պարտք է եղել «Շենիկ» ընկերությանը, մաս-մաս փակել է եւ զրոյացրել իր հաշիվը: Սակայն, այս դեպքից հետո Ընկերությունից կրկին հայտնել էին, որ նա էլի պարտքեր ունի, վերջինս էլ ներկայացված պարտքի մի մասը վճարել էր օնլայն տարբերակով, իսկ մյուս մասը մաս-մաս տրամադրել էր ընկերության աշխատակիցներին, որոնք էլ խոստացել են անպայմանորեն վճարումներն անել եւ ներկայացնել կտրոնները:

Ընկերության աշխատակիցները վստահեցնում են՝ գումարը վճարել են, սակայն խուսափում են տրամադրել վճարման կտրոնները: «Շենիկ» ջրօգտագործման ընկերությունից իրացման գծով փոխտնօրեն Արտակ Պետրոսյանը մեզ հետ զրույցում հայտնեց հետեւյալը. «Պարտքերի վերաբերյալ գործը դատարան է ներկայացված: Երկու տարվա գործ է, եւ վճիռը կայացված է: Իրենք էլ դա չեն ընդունում, ասում են՝ «մեզ զրոյական տվեք»: Տվյալ մարդու դեպքում երկու գործ է: Առաջինը՝ 313 248 ՀՀ դրամ է, մյուսը՝ 248 108 ՀՀ դրամ է: Ինքը ստորագրել է ներկայացված 20 լիտրի դեպքում, թող այդ 20 լիտրի գումարը վճարի: Ինչ վերաբերում է ստորագրությունը կեղծելուն. մենք չենք կարող ներկայացված մատյանների ստորագրություններն անհատապես իմանալ՝ որը ումն է: Գործը դատարանում է, եւ եթե առարկություն ունի, ապա թող դատարանին բողոք ներկայացնի»:

Սակայն մեզ ահազանգած քաղաքացին պնդում է՝ իրեն խաբել են: Նա «Ժողովուրդ»-ին տեղեկացրեց, որ իր ձեռքի տակ ունի խաբեությունը ապացուցող փաստեր ու ձայնագրություններ, որոնք ներկայացրել է դատարան:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար, 2 մարդ մահացել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԼՅՈՒԿՈԶԱՅԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Երեկ՝ հոկտեմբերի 23-ին, տեղի է ունեցել ՀՀ Կառավարության հերթական նիստը, որը վարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Գործադիրն ընդունել է որոշում՝ պայմանավորված 0-18 տարեկան պացիենտների արյան մեջ գլյուկոզայի շարունակական մոնիթորինգի համակարգերի ապահովման եւ սպասարկման ծրագրի ձեռքբերման անհրաժեշտությամբ:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից արյան մեջ գլյուկոզայի շարունակական մոնիթորինգի համակարգերի եւ սպասարկման ծրագրի ձեռքբերման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան հայտարարվել է գնման ընթացակարգ. արդյունքում 2025 թվականի մայիսի 23-ին կնքվել է պայմանագիր 2025-2027թթ. կարիքների համար: 0-18 տարեկան ինսուլինոկախյալ երեխաներն անհրաժեշտություն ունեն օրական 5-6 անգամ չափել արյան մեջ գլյուկոզայի մակարդակը, որն իրականացնում են թեստ երիզների միջոցով: Թեստ երիզների կիրառումն իջեցնում է կյանքի որակը , եւ մանկահասակ երեխաները շատ հաճախ հրաժարվում են չափելուց եւ ինսուլին դեղի ներարկումներից, որն էլ նպաստում է ինսուլին դեղի սխալ դոզավորման եւ առողջական բարդությունների առաջացման:

Հաշվի առնելով ՀՀ պետական բյուջեի հնարավորությունները ծրագրի ներդրումը՝ իրականացվում է փուլային, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2025թ. հուլիսի 24-ի թիվ 1007-Ն որոշմամբ թվով 244 առավել խոցային խմբերի՝ 0-9 տարեկան պացիենտների համար, հատկացվել է 181,9 մլն դրամ, սույն որոշմամբ նախատեսվում է ծրագրից օգտվող 756 պացիենտների հատկացնել թեստ երիզներ, որի համար անհրաժեշտ է 570,9 մլն ՀՀ դրամ: Մասնավորապես «Դեղորայքի տրամադրում ամբուլատորպոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին եւ հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառման մեջ «շաքարային եւ ոչ շաքարային դիաբետով հիվանդների թիվը» ցուցանիշի մեջ արդեն իսկ ներառված են շահառուները, իսկ «Իմունականխարգելման ազգային ծրագիր» միջոցառմամբ հաստատված ոչ ֆինանսական ցուցանիշների փոփոխության անհրաժեշտություն չկա:

Վարչապետն արձանագրել է, որ որոշումը հեղափոխական նշանակություն ունի, քանի որ ձեռք են բերվելու վերջին սերնդի մեթոդի կիրառմամբ սարքեր, ինչն էականորեն փոխելու է հարյուրավոր երեխաների կյանքի որակը:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՓՈԽՄԱՐԶՊԵՏ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

Վարչապետ Փաշինյանը որոշում է ստորագրել. «Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Վասիլ Ասլանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի տեղակալ»,- նշված է որոշման մեջ:

ԲՆԱԿԻՉՆԵՐՆ ԱՀԱՋԱՆԳՈՒՄ ԵՆ

Ի՞ՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ՋՐՀԵՂԵՂԻՑ 1.5 ՏԱՐԻ ԱՆՑ

Նախանցած տարի՝ մայիսին, Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրեւների պատճառով վարարած Դեբեդ գետը, հունից դուրս գալով, ջրհեղեղ է առաջացրել, որը ավերածությունների պատճառ է դարձել մարզի մի շարք բնակավայրերում, այդ թվում՝ Ալավերդի եւ Թումանյան քաղաքներում:

Ալավերդիից ArmLur.am լրատվականին տեղեկացնում են, որ շուրջ երկու տարի է անցել, բայց ճանապարհները հավուր պատշաճի վերանորոգված չեն:

«Տարի ու կես է անցել, բայց ոչ մի գործ չի արվել: Ճանապարհները թքած-կպցրած են: Մեկ-երկու կոսմետիկ աշխատանքներ են արել, եւ թվում է, թե ճանապարհը խնդիր չունի: Ճանապարհը հիմնանորոգված չէ: Այն հիմնանորոգելու համար պետք է փորձաքննություն անեին, ջրի հոսքը պիտի ճիշտ կարգավորեին, լիցք անեին, ու այսպես ամիսների աշխատանք էր պահանջվում, բայց սրանք (իշխանությունը - խմբ.) ժամանակավոր լիցք արեցին, վրայից ասֆալտ արեցին, ու չի հասկացվում, որ ճանապարհը նախկինում փլուզված է եղել»,- ArmLur.am լրատվականին փոխանցեց Ալավերդի քաղաքի բնակիչը:

ArmLur.am-ին ահազանգած քաղաքացին տեղեկացնում է, որ այս օրերին վերսկսել են ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները: Նա նաեւ հակված է կարծելու, որ սա նախընտրական քարոզարշավի մաս է կազմում: «Հիմա, քանի որ ընտրություններին մնացել է քիչ ժամանակ, սրանք (իշխանությունը - խմբ.) հետաքրքիր քայլ են արել: Նախ՝ որոշել են Ախթալայում բացել երկրորդ երկաթե կամուրջը, իսկ Ալավերդիում էլ որոշել են սարքել ճանապարհները: Թե ինչի՞ քնեցին-մնացին ու նոր հիշեցին, որ խոստացած ճանապարհ ունեն սարքելու, կարծում եմ, բոլորին էլ պարզ է»,- ասում է Ալավերդու բնակիչը:

Նա նաեւ մեզ հայտնում է, որ Ալավերդիում մարդկանց տներն սկսել են սեփականաշնորհել, մեր զրուցակցի խոսքով ասած՝ «մարդկանց սրտերը շահել»: Ալավերդու բնակիչը մեզ նաեւ տեղեկացնում է, որ Ախթալա համայնքում երկու կամուրջ կար՝ մեկը երկաթբետոնե, մյուսը պատմական, որ մարդկանց տանում էր դեպի Ախթալայի եկեղեցի:

«Ալավերդիում այս պահին երկու կամուրջ են կառուցում, որ մեկով գնան, մյուսով գան ու թեթեւ լինի: Պատմական կամուրջը չեն սարքելու... Մտադրություն էլ չունեն»,- ասաց մեզ ահազանգած քաղաքացին:

Հիշեցնենք՝ 2024 թվականի մայիսի 25-ին գիշերը տեղացած հորդառատ անձրեւի պատճառով Դեբեդ գետը դուրս էր եկել իր հունից, առաջացրել ջրհեղեղ, որը ավերածությունների պատճառ էր դարձել Տավուշի եւ Լոռու մարզի մի շարք բնակավայրերում: ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի առաջարկությամբ եւ Կառավարության որոշմամբ, աղետի գոտի ճանաչված բնակավայրերում հիմնանորոգման, շինարարական եւ այլ աշխատանքների համար, ինչպես նաեւ աղետից տուժած բնակիչներին փոխհատուցում տրամադրելու համար հատկացվել էր 318.8 մլն դրամ, որի գերակշիռ մասը ընդգրկում էր Լոռի եւ Տավուշ մարզերը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ ԵՎ Asia Alliance Bank

ԲԱՆԿԵՐԸ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՄԵԿՆԱՐԿԵԼ

«Կոնվերս» բանկը (Հայաստան) եւ Asia Alliance Bank-ը (Ուզբեկստան) պաշտոնապես հայտարարել են ռազմավարական համագործակցության մեկնարկի մասին: Հոկտեմբերի 21-ին Վիեննայում կողմերը ստորագրել են պայմանագիր միջազգային ֆինանսական թղթակցային հաշիվների բացման եւ կառավարման, ինչպես նաեւ գլխավոր համաձայնագիր՝ արտարժութային եւ դրամային շուկաներում համագործակցության վերաբերյալ:

Ստորագրման արարողությունը տեղի է ունեցել BACEE-ի հոբելյանական 50-րդ համաժողովի շրջանակում, որի Ադամանդե հովանավորն էր «Կոնվերս» բանկը: Այն դարձել էր կամուրջ տարբեր երկրների բանկային համակարգերի ներկայացուցիչների համար եւ միավորել ֆինանսական ոլորտի համաշխարհային առաջատարներին՝ ոլորտի զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները քննարկելու եւ նոր գործընկերային հարաբերություններ ստեղծելու նպատակով:

«Կոնվերս» բանկում նշել են, որ այս գործակցությունը միտված է ընդլայնելու «Կոնվերս» բանկի միջազգային գործընկերային ցանցը եւ ընդլայնելու միջազգային ֆինանսական շուկաներին հաճախորդների առավելագույն հասանելիությունը:

«Կոնվերս» բանկի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն Հրանտ Հակոբյանն ասում է. «Վստահ ենք, որ Asia Alliance Bank-ի հետ այս գործընկերությունը ոչ միայն նոր հնարավորություններ կստեղծի բանկերի հաճախորդների համար, այլեւ կնպաստի «Կոնվերս» բանկի՝ միջազգային ֆինանսական շուկաներին ինտեգրացիայի մակարդակի բարձրացմանը եւ առաջատար դիրքի ամրապնդմանը»:

Նշվել է նաեւ, որ վերջին մեկ տարվա ընթացքում միջազգային գործընկերային ցանցի ընդլայնման ռազմավարության շրջանակում «Կոնվերս» բանկը համագործակցության պայմանագրեր է կնքել առաջատար եւս մի քանի կառույցի հետ:

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՎԻՏՏՈՐԻՈ ԳՐԻԳՈԼՈՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԿԱՅԱՑԱՎ ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՏԵՆՈՐԻ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն օրերս ընդունել էր իտալացի հռչակավոր տենոր Վիտտորիո Գրիգոլոյին, որը Հայաստան էր ժամանել Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ համերգային ծրագրով հանդես գալու նպատակով:

Նախագահ Վահագն Խաչատուրյանը ողջունել է աշխարհահռչակ երգչի այցը՝ ընդգծելով, որ նման արվեստագետների ներկայությունը հարստացնում է Հայաստանի մշակութային կյանքը: Նախագահը հույս է հայտնել, որ Վիտտորիո Գրիգոլոյի եւ հայ երաժիշտների համագործակցությունը կունենա շարունակական բնույթ, եւ հայ հանդիսատեսը կրկին հնարավորություն կունենա վայելելու նրա վարպետությունը:

Վիտտորիո Գրիգոլոն իր հերթին շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ Հայաստանն իր համար հարազատ երկիր է, որը նա մշտապես կրում է իր սրտում: Ջրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել երկու ժողովուրդների մշակութային կապերին ու փոխազդեցություններին: Երկուստեք շեշտվել է, որ արվեստը ժամանակի ու տարածության սահմաններից դուրս է՝ միավորելով մարդկանց եւ նպաստելով փոխըմբռնման, համերաշխության ու ստեղծարար միջավայրի ձեւավորմանը:

Գրիգոլոն հանդես է եկել աշխարհի ամենահեղինակավոր բեմերում՝ La Scala-ից մինչեւ Metropolitan Opera: Նա համագործակցել է Լուչիանո Պավարոտիի, Սթինգի, ինչպես նաեւ օպերային երգիչներ Հասմիկ Պապյանի, Ջուլիանա Գրիգորյանի եւ Բարսեղ Թումանյանի հետ: Նրա ալբոմները՝ թողարկված Sony Classical լեյբլում, ներառյալ պլատինե սկավառակը West Side Story մյուզիքլով, ընդգրկվել են համաշխարհային դասական չարթերում եւ առաջադրվել են Grammy մրցանակի: Գրիգոլոյին իրավամբ անվանում են իտալացի մեծ տենորների՝ Պավարոտիի, Դոմինգոյի եւ Կարերասի արժանի ժառանգորդ:

Հոկտեմբերի 21-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացավ հռչակավոր տենորի սպասված համերգը: Երեւանում Գրիգոլոն ներկայացրեց դասական եւ հանրահայտ ստեղծագործություններ՝ Volare, My Way, Arrivederci Roma, Caruso, The Show Must Go On, ինչպես նաեւ Կավարադոսսիի արիան Ջակոմո Պուչչինիի «Տոսկա» օպերայից: Համերգն ընթանում էր Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի ուղեկցությամբ՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ:

Ստացած տպավորությունների մասին ֆիլհարմոնիկ նվագախմբի ֆեյսբուքյան էջը համերգից հետո հրապարակեց. «Վիտտորիո Գրիգոլոյի եւ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը դարձավ աշնան ամենավառ մշակութային իրադարձություններից մեկը:

Առաջին իսկ հնչյուններից դահլիճը լցվեց իտալական կրքով, բեմական շլացուցիչ էներգիայով եւ անկրկնելի արտիստիզմով:

Գրիգոլոյի ձայնը՝ տաք, հզոր եւ անսահման արտահայտիչ, հուզեց ու ոգեշնչեց հանդիսատեսին:

Նվագախումբը՝ մաեստրո Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ, փայլեց իր վարպետությամբ, իսկ ոտքի կանգնած հանդիսատեսի երկարատեւ ծափահարությունները դարձան լավագույն գնահատականը»:

Նշենք նաեւ, որ իր մամուլի ասուլիսում աշխարհահռչակ երգիչը պատմել է Հայաստանի հետ ունեցած իր անձնական կապի մասին. «Հայաստանն իմ սրտին մոտ է, դուք չեք էլ պատկերացնում, այն իմ մարմնի մի մասն է: Չեմ ուզում ամեն ինչ բացահայտել, բայց ինչ-որ առումով Հայաստանն իմ մեջ է»:

Տենորը նշել է նաեւ, որ հիացմունքով է վերաբերվում հայկական մշակույթին, դուդուկի հնչյուններին եւ «Դլե Յաման» ստեղծագործությանը՝ ընդգծելով, որ երաժշտությունը ժողովրդի պատմությունն ու հոգին հասկանալու լավագույն բանալին է:

Հայ հանդիսատեսը մեծ սիրով վայելեց Գրիգոլոյի անզուգական կատարումները՝ լի հմայքով, զգացմունքայնությամբ եւ բացառիկ տեխնիկայով: Նրա ձայնը, մեղեդիների ընտրությունն ու բեմական ներկայությունը ստեղծեցին իսկական երաժշտական տոն՝ միավորելով տարբեր ճաշակների, տարիքների եւ ազգերի մարդկանց մեկ համերգային ծրագրում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՄԱՆՑ

102 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՔՈՒՅՐԸ՝ ԱԻԴԱ ԱԶՆԱՎՈՒՐԸ

102 տարեկանում կյանքից հեռացել է Շառլ Ազնավուրի քույրը՝ Աիդա Ազնավուր-Կառվարենցը:

«Ազնավուր» հիմնադրամը հոկտեմբերի 22-ին հայտնեց այս մասին՝ նշելով, որ նա «խաղաղությամբ է լքել այս աշխարհը՝ թողնելով գեղեցիկ ապրած կյանք՝ լի սիրով, ուժով եւ ընտանիքի հանդեպ նվիրվածությամբ»:

«Մեր սրտերը վշտացած են, բայց լի են երախտագիտությամբ Աիդայի հետ միասին անցկացրած տարիների համար: Նրա սերն ու ջերմությունը միշտ կմնան մեզ հետ: Աիդայի մահվան կապակցությամբ մենք հարգանքի տուրք ենք մատուցում ոչ միայն մեր սիրելի քրոջը եւ հորաքրոջը, այլեւ անչափ արժեւորում ենք արժանապատվորեն ու նվիրվածությամբ ապրած նրա կյանքը»,- ասվում է Ազնավուր ընտանիքի հայտարարությունում:

Աիդա Ազնավուր-Կառվարենցը կհուղարկավորվի ընտանեկան գերեզմանատանը՝ Մոնֆոր-լ'Ամորիում՝ իր ընտանիքի անդամների եւ ամուսնու կողքին:

ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱԲՈՒ ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՈՎ

Գորիսի պետական դրամատիկական թատրոնում հանդիսավորությամբ բացվեց 89-րդ թատերաշրջանը: Նոր թատերաշրջանը մեկնարկեց թատրոնի նորանշանակ ռեժիսոր Դավիթ Հարությունյանի բեմադրությամբ՝ ըստ Ավետիք Իսահակյանի համանուն պոեմի՝ «Աբու Լալա Մահարի» ներկայացմամբ:

«Թատրոնից պետք է կառչել: Թատրոնին չպետք է մենակ թողնել, այն մեր հոգեւոր կյանքի կարեւորագույն օջախներից մեկն է»,- բացման իր ելույթում նշել է ռեժիսորը:

Թատրոնի տնօրեն Սյուզաննա Խաչատրյանի խոսքով՝նոր թատերաշրջանը լինելու է հարուստ եւ բազմաժանր. «Ծրագրում ընդգրկված են ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից հեղինակների գործեր: Մեր նպատակն է թատրոնը դարձնել ավելի կենդանի ու բաց՝ բոլոր տարիքի հանդիսատեսի համար»:

Թատրոնի անձնակազմը վստահեցնում է, որ Գորիսի թատրոնը, շարունակելով իր երկարամյա եւ հարուստ ավանդույթները՝ մնում է քաղաքի մշակութային կյանքի կարեւոր օջախներից մեկը՝ մի վայր, որտեղ արվեստը ոչ միայն ներկայացվում է, այլեւ ձեւավորում է մտածողություն, հոգեւոր արժեքներ եւ քաղաքացիական գիտակցություն:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՆՉԵՍԹԵՐ ՍԻԹԻՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼ FCB-Ի ՖՈՒՏԲՈԼԻՍՏԻ ՀԵՏ

«Բարսելոնայի» իսպանացի պաշտպան Ալեխանդրո Բալդեն հայտնվել է «Մանչեսթեր Սիթիի» ուշադրության կենտրոնում: Այս մասին հայտնում է E-Notvcies-ը:

Աղբյուրի տեղեկություններով՝ «քաղաքայինների» գլխավոր մարզիչ Պեպ Գվարդիոլան անձամբ հետաքրքրված է Բալդեի ծառայություններով, քանի որ արդեն քննարկել է հնարավոր տրանսֆերը կատալոնական ակումբի մարզական տնօրեն Դեկուի հետ:

«Մանչեսթեր Սիթին» փորձել էր Բալդեին ձեռք բերել դեռեւս 2023 թվականին՝հույս ունենալով օգտվել «Բարսելոնայի» ֆինանսական դժվարություններից, սակայն մերժվել էր: Նշվում է, որ նման տրանսֆերը ներկայումս անհավանական է թվում, քանի որ իսպանական գրանդի ֆինանսական վիճակը կայունացել է, իսկ Բալդեն դարձել է առանցքային խաղացող:

Այնուամենայնիվ, Գվարդիոլան չի պատրաստվում նահանջել, քանի որ Բալդեին համարում է իր խաղաոճին համապատասխանող իդեալական ֆուտբոլիստ: 21-ամյա իսպանացու պայմանագրի ժամկետը «Բարսելոնայի» հետ նախատեսված է մինչեւ 2028 թվականը: Transfermarkt-ը երիտասարդ պաշտպանի տրանսֆերային արժեքը գնահատում է 60 միլիոն եվրո:

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ

«Բարսելոնայի» բրազիլացի հարձակվող Ռաֆինյան կմասնակցի Լա Լիգայի 10-րդ տուրի Մադրիդի «Ռեալի» դեմ խաղին, հաղորդում է Marca-ն: Աղբյուրի տեղեկություններով՝ բրազիլացին արդեն մարզվում է ամբողջ թիմի հետ եւ պատրաստ է մասնակցել հոկտեմբերի 26-ին կայանալիք «Էլ Կլասիկոյին»:

Նշվում է, որ խաղացողի վերականգնումը կատարյալ է ընթանում: Ռաֆինյան արդեն թույլտվություն ուներ մասնակցելու Չեմպիոնների լիգայի խմբային փուլի երրորդ տուրի «Օլիմպիակոսի» դեմ խաղին (6:1), սակայն գլխավոր մարզիչ Հանս-Դիտեր Ֆլիկը որոշել էր նրան եւս մի քանի օր հանգիստ տալ: Դեռեւս հայտնի չէ՝ Ռաֆինյան կլինի՞ մեկնարկային կազմում, թե՞ ոչ:

Բրազիլացին ազդրի վնասվածք էր ստացել սեպտեմբերի 25-ին «Օվիեդոյի» դեմ խաղում (3:1):

ՊԱՏԱՍԽԱՆ

Իսպանիայի ֆուտբոլի թագավորական ֆեդերացիայի (RFEF) կարգապահական կոմիտեն մերժել է «Բարսելոնայի» բողոքարկումը թիմի գլխավոր մարզիչ Հանս-Դիտեր Ֆլիկի որակազրկման վերաբերյալ, հայտնում է լրագրող Խերարդ Ռոմերոն X սոցիալական ցանցում:

Գերմանացի մասնագետն Իսպանիայի առաջնության 9-րդ տուրի՝ «Ժիրոնայի» դեմ խաղում (2:1) ստացել էր երկու դեղին քարտ եւ որակազրկվել մեկ խաղով:

Այսպիսով, Ֆլիկը բաց կթողնի 10-րդ տուրի՝ Մադրիդի «Ռեալի» դեմ հանդիպումը: Հանդիպումը տեղի կունենա Մադրիդում կիրակի օրը:

● *Հոկտեմբերի 29-ին՝ 19:30-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Առաքել ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-12.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցելու համար ղարտադի՞ր է լինել գործող ուսուցիչ, թե՞ հայտ կարող են լրացնել նաեւ ուսուցիչ չաշխատող անձինք:

Ֆելիքս Սարգսյան (24 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ֆ. Սարգսյանի հարցին ի պատասխան հայտնում ենք՝ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչները, ինչպես նաեւ համապատասխան կարգով սահմանված առարկաների մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչ չաշխատող անձինք կամավոր ատեստավորման դիմելու համար պետք է իրականացնեն ստորեւ ներկայացված քայլերը.

- կամավոր ատեստավորման դիմելու համար պետք է օգտվեն at.emis.am համակարգից,
- գրանցվեն, ակտիվացնեն հարթակում հաշիվ,
- մուտքագրեն անհրաժեշտ տվյալները, որից հետո սեղմեն «Հաստատել տվյալները» կոճակը. կբացվի էջ, որտեղ կառաջարկվի ընտրել երեք տարբերակներից մեկը, որտեղ ուսուցիչ չաշխատող անձը պետք է ընտրի «Տվյալ պահին չեմ աշխատում» տարբերակը,
- հաջորդիվ պետք է ընտրեն այն մասնագիտությունը, որից ցանկանում են անցնել կամավոր ատեստավորում, եւ սեղմեն «հաստատել»՝ հայտը ուղարկելու համար:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող մասնագետները կամավոր ատեստավորման են դիմում ուսուցիչ չաշխատող անձանց համար նախատեսված տարբերակով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՔՐԵԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են քննչական եւ դատական գործողությունների արձանագրությունները:

Հուսիկ Կիրակոսյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քննչական եւ դատական գործողությունների արձանագրությունները սույն օրենսգրքով նախատեսված գրավոր կազմված փաստաթղթեր են, որոնք հաստատում են քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից անմիջականորեն ընկալված, քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները: Որպես ապացույց կարող են օգտագործվել նաեւ կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների վերաբերյալ ընդունված բանավոր հայտարարությունների, մեղայականով ներկայանալու, ձերբակալման, անձանց իրավունքների եւ պարտականությունների պարզաբանման առիթով կազմված արձանագրությունները:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քննչական գործողության արձանագրության ոչ լրիվությունը չի կարող մեղադրանքի նպատակներով լրացվել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, ինչպես նաեւ ընթերակայի եւ այլ անձանց ցուցմունքներով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Shamshyan.com-ի

Հոկտեմբերի 23-ին ավտովթար է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհին՝ դեպի Երեւան ընթանալիս՝ «Չայնիի» ոլորաններում, «Opel Zafira» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել հողաթմբերին եւ կողաշրջվել: Վթարի հետեւանքով ավտոմեքենայի անվահեծաններից մեկը եւ գազաբալոնները պոկվել ու շպրտվել են: Կա երկու վիրավոր, որոնց շտապօգնության բժիշկները տեղափոխել են հիվանդանոց:

Հորդորում ենք վարորդներին զգույշ լինել եւ ամեն պարագայում գցել ամրագոտի: Ապացուցված է, որ ամրագոտին շուրջ 50 %-ով նվազեցնում է անգամ ծանր, միջինից ծայրահեղ վնասի ռիսկը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 2 + 7 +11 + 16
	Կոտայքի լեռներ	+ 2 + 6 +11 + 15
	Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 +18 + 20
	Գեղարքունիք	+ 2 + 6 +11 + 16
	Լոռի	+ 5 + 9 +16 + 19
	Տավուշ	+ 9 + 13 +20 + 23
	Արագածոտնի լեռներ	+ 2 + 5 +11 + 14
	Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 + 19 + 22

	Արարատ	+ 8 + 12 +20 + 23
	Արմավիր	+ 8 + 12 +20 + 23
	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 6 +11 + 15
	Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +20 + 23
	Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +17 + 20
	Սյունիքի հովիտներ	+12 + 14 +21 + 25
	ԼՂՀ	+10 + 12 +18 + 23
	Երեւան	+14 + 16 +20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.10.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*